https://doi.org/10.46991/hc.2025.22.1.180

Observations on the Concept of "History" (19th–20th centuries) (Questions of Theory of History)

Ararat Hakobyan
https://orcid.org/0009-0005-8875-5970
Doctor of Historical Sciences, Professor, leading researcher at the Department of the New History of the Institute of History of the NAS of the RA
ararathakobyan47@gmail.com

Vahagn Hakobyan
https://orcid.org/0009-0002-3742-7094
Associate Professor at the Chair of Armenian History of Yerevan State University, Candidate of Historical Sciences
v.hakobyan@ysu.am

Keywords: history, consider, homeland, past, time, memory, European historical and philosophical thought, meaning, nature.

Examining the observations of representatives of European, and partly Russian, historical and philosophical thought on the meaning, understanding, and significance of the concept of "history", we can come to the following conclusions. First and foremost, history is an integral part of humanity's conscious life. Without history, there is no human or human society. History is the memory of humanity. Without memory, there is no history. History is a repository of material and spiritual wealth created by human society, from which we learn, gain experience, and draw lessons for the present and future. The meaning of history should be seen not in the class division and hostility of people towards each other, but in ensuring the freedom and progress of people and nations. As long as the world and humanity exist, history will exist. The educational and instructive role of history is undeniable, both in the achievements and successes left to humanity, and in humanity's aspirations for freedom and development reflected on its pages, as well as in the inevitably accompanying sad pages and sometimes failures. The experience of history shows that new challenges await humanity in the future. This is evidenced and confirmed by European historical and philosophical thought, as well as, to some extent, by modern real life and reality.

The entire system of values created by humanity accumulates in history. One of the main merits of history is that it contributes to the development of people's intellectual abilities, science in general, and

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 180-198
Received: 11.06.2025
Revised: 11.08.2025
Accepted: 17.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2025

spiritual and cultural progress and development. History is a means of self-knowledge of the human spirit. In addition, history is called upon to understand the present through knowledge of the past and to correctly orient oneself in the future. Due to the cause-and-effect relationship between the past and the present, spiritual and cultural inheritance occurs as information transmitted to generations. Knowledge of history also contributes to strengthening the patriotic aspirations of each nation, enriching socio-political knowledge, and developing scientific and spiritual thought and values in general.

History is especially valuable and important for Armenia and Armenian society, especially when we consider its rich, suffering, instructive, and edifying path of millennia, directed towards the present and future. Armenian history, like that of many peoples, in addition to socio-economic and political aspects, has also borne the imprint of the ontological over the centuries. And this, apparently, was due, on the one hand, to the geopolitical position and conditions of Great Armenia, and on the other hand, to the peculiarities of the national mentality. But with all this, Armenia and the Armenian people undoubtedly constitute an integral and inalienable part of world history.

Դիտարկումներ «պատմություն» հասկացության մասին XIX-XX դդ. (պատմության տեսության հարցեր)

Արարատ Հակոբյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, պ. գ. դ., պրոֆեսոր

Վահագն Հակոբյան
ԵՊՀ, Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու

Հիմնաբառեր՝ պատմություն, դիտարկում, հայրենիք, անցյալ, ժամանակ, հիշողություն, Եվրոպական պատմափիլիսոփայական միտք, իմաստ, բնություն:

Ուսումնասիրելով եվրոպական, և մասամբ՝ ռուսական պատմափիլիսոփայական մտքի ներկայացուցիչների դիտարկումները «պատմություն» հասկացության իմաստի, ըմբռնման և նշանակության վերաբերյալ՝ կարող ենք գալ հետևյալ եզրակացություններին: Նախ և առաջ, պատմությունը մարդկության գիտակցական կյանքի անբաժանելի մասն է: Առանց պատմության չկա մարդ կամ մարդկային հասարակություն: Պատմությունը մարդկության հիշողությունն է: Առանց հիշողության պատմություն չկա: Պատմությունը մարդկային հասարակության կողմից ստեղծված նյութական և հոգևոր հարստության պահոց է, որից մենք սովորում ենք, փորձ ենք ձեռք բերում և դասեր քաղում ներկայի և ապագայի համար: Պատմության իմաստը պետք է տեսնել ոչ թե մարդկանց դասակարգային բաժանման և միմյանց նկատմամբ թշնամանքի մեջ, այլ մարդկանց և ազգերի ազատության և առաջընթացի ապահովման մեջ: Քանի դեռ գոյություն ունեն աշխարհն ու մարդկությունը, պատմությունը գոյություն կունենա: Պատմության կրթական և ուսուցողական դերը անհերքելի է՝ թե՛ մարդկությանը թողած նվաճումներում և հաջողություններում, թե՛ մարդկության ազատության և զարգացման ձգտումներում, որոնք արտացոլվում են դրա էջերում,

ինչպես նաև դրան անխուսափելիորեն ուղեկցող տխուր էջերում և երբեմն՝ անհաջողություններում: Պատմության փորձը ցույց է տալիս, որ ապագայում մարդկությանը սպասում են նոր մարտահրավերներ: Սա վկայում և հաստատվում է եվրոպական պատմական և փիլիսոփայական մտքի, ինչպես նաև որոշ չափով ժամանակակից իրական կյանքի և իրականության կողմից:

Մարդկության կողմից ստեղծված արժեքների ամբողջ համակարգը կուտակվում է պատմության մեջ: Պատմության հիմնական արժանիքներից մեկն այն է, որ այն նպաստում է մարդկանց մտավոր կարողությունների զարգացմանը, գիտության ընդհանուր առմամբ, հոգևոր-մշակութային առաջընթացին և զարգացմանը: Պատմությունը մարդկային հոգու ինքնաճանաչման միջոց է: Բացի այդ, պատմությունը կոչված է անցյալի իմացության միջոցով հասկանալու ներկան և ճիշտ կողմնորոշվելու ապագայում: Անցյալի և ներկայի միջև պատճառահետևանքային կապի շնորհիվ հոգևոր և մշակութային ժառանգությունը տեղի է ունենում որպես սերունդներին փոխանցվող տեղեկատվություն: Պատմության իմացությունը նաև նպաստում է յուրաքանչյուր ազգի հայրենասիրական ձգտումների ամրապնդմանը, սոցիալ-քաղաքական գիտելիքների հարստացմանը և գիտական և հոգևոր մտքի ու արժեքների զարգացմանը ընդհանրապես:

Պատմությունը հատկապես արժեքավոր և կարևոր է Հայաստանի և հայ հասարակության համար, հատկապես, երբ հաշվի ենք առնում նրա հազարամյակների հարուստ, տառապալից, ուսուցողական և դաստիարակչական ուղին՝ ուղղված դեպի ներկան և ապագան: Հայկական պատմությունը, ինչպես շատ ժողովուրդների պատմությունը, սոցիալ-տնտեսական և քաղաքական ասպեկտներից բացի, դարերի ընթացքում կրել է նաև գոյաբանական հետքը: Եվ սա, ըստ երևույթին, պայմանավորված էր մի կողմից՝ Մեծ Հայքի աշխարհաքաղաքական դիրքով և պայմաններով, մյուս կողմից՝ ազգային մտածելակերպի առանձնահատկություններով: Սակայն այս ամենով հանդերձ՝ Հայաստանը և հայ ժողովուրդը, անկասկած, կազմում են համաշխարհային պատմության անբաժանելի և անբաժանելի մասը:

Наблюдения над понятием «История» (XIX–XX вв.)
(Вопросы теории истории)

Арарат Акопян
Доктор исторических наук, профессор, ведущий научный сотрудник отдела Новой истории Института истории Национальной академии наук Республики Армения

Ваагн Акопян
Доцент кафедры истории Армении Ереванского государственного университета, кандидат исторических наук

Ключевые слова: история, рассматривать, родина, прошлое, время, память, Европейская историко-философская мысль, смысл, природа.

Рассматривая наблюдения представителей европейской, отчасти и русской историко-философской мысли о смысле, понимании и значении понятия «история», можно прийти к следующим выводам. Прежде всего, история является неотъемлемой частью сознательной жизни человечества. Нет истории - нет человека и человеческого общества. История - это память человечества. Без памяти нет истории. История - это хранилище материальных и духовных богатств, созданных человеческим обществом, из которого мы учимся, приобретаем опыт, извлекаем уроки для настоящего и будущего. Смысл истории следует видеть не в классовом разделении и враждебности людей друг к другу, а в обеспечении свободы и прогресса людей и наций. Пока существует мир и человечество, будет существовать и история. Неоспорима воспитательная и поучительная роль истории, как в достижениях и успехах, оставленных человечеству, так и в стремлениях человечества к свободе и развитию, отраженных на ее страницах, а также в неизбежно сопутствующих ей печальных страницах и иногда неудачах. Опыт истории показывает, что в будущем человечество ждут новые испытания. Об этом свидетельствует и подтверждает европейская историко-философская мысль, а также в какой-то мере современная реальная жизнь и действительность.

В истории накапливается вся система ценностей, созданная человечеством. Одна из главных заслуг истории в том, что она способствует развитию интеллектуальных способностей людей, науки в целом и духовно-культурному прогрессу и развитию. История - это средство самопознания человеческого духа. Кроме того, история призвана понять настоящее через знание прошлого и правильно ориентироваться в будущем. Благодаря причинно-следственной связи между прошлым и настоящим происходит духовно-культурное наследование как информация, передаваемая поколениям. Знание истории также способствует усилению патриотических устремлений каждого народа, обогащению общественно-политических знаний и развитию научной и духовной мысли и ценностей в целом.

История особенно ценна и важна для Армении и армянского общества, особенно когда мы учитываем ее насыщенный, страдальческий, поучительный и назидательный путь тысячелетий, направленный на настоящее и будущее. Армянская история, как и у многих народов, помимо социально-экономического и политического аспектов, на протяжении веков несла на себе также отпечаток онтологического. И это, по всей видимости, было обусловлено, с одной стороны, геополитическим положением и условиями Великой Армении, а с другой стороны - особенностями национального менталитета. Но при всем этом Армения и армянский народ, несомненно, составляют единую и неотъемлемую часть мировой истории.

* * *

Ներածություն: Պատմությունը գիտություն է մարդկանց, ժողովուրդների, պետությունների, հասարակական-քաղաքական կյանքի ու երևույթների, տնտեսության, մշակույթի, նյութական ու հոգևոր այլ արժեքների անցյալի պատմություն իմաստավորման մասին: Արդի ընկալումներով՝ մտքերից ու մարդկային գործունեությունից կազմված պատմությունը նաև իմաստավորված

տեղեկատվություն է անցյալի մասին: Պատմությունն անցյալի իրականության հնարավորինս սեղմ ու ստույգ վերարտադրությունն է, որում ներառված է մարդկանց և ժողովուրդների կյանքի ու գործունեության հետագիծը: Պատմությունը ընդունված է չափել ժամանակի ու տարածության մեջ: Այն մեզ ներկայանում է հետազոտության նյութ հանդիսացող գրավոր, բանավոր, իրեղեն աղբյուրների միջոցով, որոնցից բխեցվում են պատմական փաստերը: Իսկ դրանք կարելի է չափել ու որոշել միայն ժամանակի և տարածության մեջ: Իմաստասիրական խոսույթներից մեկում ասվում է, որ ամենաիմաստունը ժամանակն է, քանի որ այն բացահայտում է ամեն ինչ: Եվ դա առաջին հերթին վերաբերվում ու վերագրվում է պատմությանը, քանզի ժամանակի ու տարածության մեջ է հնարավոր, պատմականության (հիստորիզմի) հաշվառմամբ, բացահայտել իրական ու ճշմարիտ պատմությունը և դրանով իմաստավորել անցյալը:

Նկատի ունենալով, որ հատկապես վերջին երեք տասնամյակներին հետխորհրդային գաղափարապես ու քաղաքականապես ազատականացած տարածքում, այդ թվում նաև Հայաստանում պատմափիլիսոփայական շրջանակներում առավել մեծացել է հետաքրքրությունը Արևմուտքի հումանիտար հետազոտությունների հանդեպ՝ սույն հոդվածով մեր առջև նպատակ ենք դրել պատմագիտական համադրման, քննական-վերլուծական մեթոդների կիրառմամբ ուսումնասիրել և ներկայացնել «պատմություն» հասկացության ու երևույթի նկատմամբ հիմնականում XIX-XX դարերի եվրոպական, մասամբ նաև ռուսական պատմափիլիսոփայական մտքի առավել ճանաչված ու խոշոր ներկայացուցիչների ընկալումները, դիտարկումներն ու գնահատականները՝ դրանք տեղայնացնելով հայ իրականության մեջ, հայերի անցյալի ու ներկայի համատեքստում: Կարծում ենք՝ կատարված աշխատանքը հնարավորություն կտա ավելի լավ ըմբռնելու պատմության կոչումը, գործառույթն ու նշանակությունը արդի մեր բարդ ժամանակաշրջանում, ինչպես նաև ավելի լավ հասկանալու և իմաստավորելու ներկան, հնարավորինս ճիշտ կողմնորոշվելու ապագայում: Բացի այդ, այն կարող է օգտակար լինել՝ ընդլայնելու համար պատմության տեսության վերաբերյալ մեր պատկերացումներն:

Եվրոպական պատմափիլիսոփայական միտքը «պատմության» մասին: Պատմության հանդեպ հետաքրքրությունը առաջացել է նախապատմական դարշրջանից՝ գործնականում բանական մարդու հանդես գալուց ի վեր: Հայ պատմագրության երախտավոր Ղևոնդ Ալիշանը (1820-1901 թթ.) իր «Հայապատում» աշխատությունն սկսում է ի՞նչ է պատմությունը հարցադրումով՝ «Ի՞նչ զարմանալի հոգեբանական բերումն է մարդոյ, որ ի ծագել մտաբերութեանն՝ ախորժելի լսել Պատմութիւն կոչուածը», իսկ մեկ այլ տեղ նշում է՝ «Ամեն ազգի սեփականագոյն յիշատակն իր Պատմութիւնն է [Ալիշան, 1901, 649]: «Պատմություն» հասկացությունը ծագում է հունարեն iotoria (historia) բառից, հայերեն՝ «հարցուփորձ», ինչը նշանակում է հարցուփորձի միջոցով անցյալի մասին պատմել, իմաստավորված գիտելիք ձեռբերել: Հասկացությունը հույներից անցել է հռոմեացիներին, իսկ վերջիններից կողմից էլ փոխանցվել է արևմուտքի լեզուներին: «Ի՞նչ է պատմությունը» պատմությունը հարցադրմանը պետք է տրվի ոչ թե դրա բառարանագիտական

բացատրություն, այլ վեր հանվի դրա իմաստն ու բովանդակությունը, զբաղեցրած դերը հասարակագիտության, մարդկանց հոգևոր և մշակութային համակարգում և այլն:

Այսպես՝ գերմանացի փիլիսոփա-մտածող, էկզիստենցիալիզմի (exsistentia-գոյության) վառ ներկայացուցիչ Կարլ Յասպերսը (1883-1969 թթ.) պատմության իմաստը հասկանալու օրակարգով, համաշխարհային պատմության ուսումնասիրման հիման վրա, փիլիսոփայական հավատքի (համոզմունքի) դիրքերից փորձել է ընդհանրություն ու կապ տեսնել Անտիկ դարաշրջանի և XX դարի պատմությունների, մարդկանց գործերի ու գործողությունների միջև [Ясперс, 1991, 20]: Մարդկության արդի և ապագա կյանքի ու պատմության շատ դրսևորումներ, անշուշտ, պետք է փնտրել նաև անցյալի, նույնիսկ հեռավոր անցյալի պատմության մեջ, քանզի Մարդն իր ազատության գիտակցման ունակությամբ, ձգտումներով, արարող մտածելակերպով ու գործելակերպով, հոգեվիճակով ու սոցիալ-հոգեբանական ապրումներով էապես չի տարբերվում, ասենք, երկու հազար տարի առաջվա մարդուց: Յասպերսը գրում է՝ «Մենք ոչինչ չգիտենք 20 հազար տարի առաջ ապրած մարդու հոգու մասին: Սակայն մենք գիտենք, որ մեզ հայտնի մարդկության պատմության ընթացքում մարդը էապես չի փոխվել ո՛չ կենսաբանական ու ֆիզիկահոգեբանական հատկանիշներով, թեև անցել է մոտ 100 սերունդ, ո՛չ էլ նախասկզբնական չգիտակցված մղումներով (импульсом)» [Ясперс, 1991, 56-57]: Յասպերսը գտնում էր, որ «ներկան հասկանալու համար հարկ է խորանալ պատմական անցյալի մեջ, քանզի ներկա գործընթացները տեղի են ունենում պատմական անցյալի հիման վրա, որի ազդեցությունը զգացվում է մեզ վրա: Միաժամանակ ներկայումս կատարվածը հարկադրում է մեզ՝ հայացք նետել նաև հավերժի ակունքներին» [Ясперс, 1991, 28]: Նա պատմության և ազատության միջև կապի հարցում ուղղակի ընդհանրություն է տեսնում այդ հասկացությունների միջև: Ըստ Յասպերսի՝ «Պատմությունը մարդու ուղին է դեպի ազատություն՝ հավատի նշանաբանով» [Ясперс, 1991, 232]: Նա պատմության իմաստն ու նպատակը տեսնում էր մարդկության կողմից ազատության և միասնության ապահովման ձգտման մեջ [Ясперс, 1991, 263]: Բացի այդ՝ Կ. Յասպերսի «ի՞նչ է պատմությունը» հարցին տրված պատասխաններից են՝ «Պատմությունը մեզ համար հանդիսանում է հիշողություն, որի մասին մենք ոչ միայն գիտենք, այլ որ նրանում են մեր կյանքի արմատները», կամ թե՝ «Պատմական մտածելակերպը (воззрение) ստեղծում է այն միջավայրը, որի միջոցով հասկանում ենք մարդու բնույթը» և կամ որ՝ «Պատմության հետ միասին փոխվում է պատմական մտածողությունը» և վերջապես՝ «Պատմությունը պատմության մասին գիտելիք է» [Ясперс, 1991, 240-241, 243]: Ահա հակիրճ այսպիսին է եվրոպացի հեղինակներից Կ. Յասպերսի դիտարկումները պատմության մասին: Կարծում ենք, որ այս մտքերը որևէ առարկություն չեն վերցնում, ուստի և ուսանելի են:

Գերմանացի մեկ ուրիշ փիլիսոփա Հայնրիխ Ռիկկերտը (1863-1936 թթ.) պատմության մասին գրում է հետևյալը, որ որոշակի ժամանակի և տարածության մեջ տեղի ունեցած և մեզ փոխանցված իրական գործընթացները մենք կոչում ենք պատմություն, իսկ այդ գործընթացների վերաբերյալ գիտությունը՝ պատմագիտություն [Ясперс, 1991, 220]: Նա այնուհետև շարունակում է՝ «Մենք պատմությանն ամենուրեք դիմում ենք այն դեպքերում, ուր մեր հետաքրքրությունը բնագիտությամբ չի բավարարվում, քանի որ այդ հետաքրքրությունը ուղղված է անհատականի ու հայեցողականի (идивидуальное и воззрительное) վրա: Միայն պատմությունն է ընդունակ լրացնել այդ բացը» [Риккерт, 1904, 220]: Ինչպես նկատում ենք, Հ. Ռիկկերտը ևս որոշակի տեղ ու

կարևորություն է տվել պատմություն երևույթին, առարկային ու գիտությանը՝ բնագիտությունից տարբերվող իր դերակատարությամբ ու յուրահատկություններով:

Անգլիացի պատմաբան ու փիլիսոփա Ռոբին Քոլլինգվուդի (1889-1943 թթ.) «Ու՞մ է հարկավոր պատմությունը» իր իսկ տված հարցին պատասխանում է՝ որ պատմությունը հարկավոր է մարդուն, մարդկային ինքնագիտակցությանը՝ ամեն ինչ, այդ թվում իր տեսակն ու բնույթը, ճանաչելու համար. «Ինքդ քեզ ճանաչել (познать)՝ կնշանակի ճանաչել մարդու էությունն ընդհանրապես, ճանաչել մարդու տեսակը և վերջապես հասկանալ այն, թե ով ես դու: Պատմության արժեքը կայանում է նրանում, որի շնորհիվ մենք իմանում ենք, թե ինչ արեց մարդը, դրանով իսկ՝ ի՞նչ է նա իրենից ներկայացնում և ենթադրաբար, թե ինչ է պատրաստվում նա անելու» [Риккерт, 1904, 220]: Մեկ այլ տեղ Ռ. Քոլլինգվուդը, հղում անելով անգլիացի հեղինակներից մեկի աշխատությունից, նշում է, որ «պատմական անցյալը ոչ թե ընդհանրապես անցյալ է, այլ նաև մեր ներկան է, անցյալից ստացված փորձ է: Այն մարդկանց, ում օտար է փորձի պատմական ձևը, նրանց համար անցյալ գոյություն չունի» [Коллингвуд, 1980, 148-149]: Եվ այդ փորձը մեզ է փոխանցում պատմաբանը: Այստեղ կարևորվում է պրոֆեսիոնալ, բայց և կարելի է հավելել ազգային նկարագրով պատմաբանի դերը: Ըստ հայ պատմագրության երախտավոր Լեոյի (1860-1932 թթ.)՝ «Պատմաբանը պետք է ճանաչի իր ժողովրդի ոգին, նրա կյանքի հոսքը և կեցության կերպը» [Լեո, 2014, 3]: Այլ խոսքով, ճշմարիտ պատմաբանը ոչ միայն համամարդկային բնույթի աշխատանք է տանում, այլև ձևակերպում է ազգային նկարագիր ու բովանդակություն պարունակող եզրույթներ:

Այստեղից կատարենք մեկ այլ հարցադրում. ո՞րն է պատմության իմաստը: Պատմությունը իրադարձությունների հանրագումար չէ, կամ անցյալից միայն ինֆորմացիա ստանալու միջոց: Պատմական փաստերն ու իրադարձությունները դեռևս պատմություն չեն: Դրանք կոչված են նպաստելու մարդկանց պատմական, այդ թվում նաև ազգային գիտակցության ու ինքնագիտակցության ձևավորմանը: Հենց դրանում է կայանում պատմության իմաստը: Ռուս ճանաչված փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևը (1874-1948 թթ.) գրում է, որ պատմության իմաստի ընկալումից է կախված նաև հասարակարգի, պետության կառուցման գաղափարախոսությունը և մեթոդաբանությունը [Բերդյաև, 2019, 5]: Նրա դիտարկմամբ՝ պատմությունը ոչ միայն մարդկանց իրական, նյութական, առօրեական կյանքի, այլև նրանց ներքին՝ հոգևոր կյանքի ճանաչման միջոց է՝ «Պատմության միջոցով է բացահայտվում աշխարհի ոչ միայն արտաքին, նյութական էությունը, այլև ներքին հոգևոր էությունը» [Բերդյաև, 2019, 29]: Իսկ ավելի վաղ գերմանական դասական փիլիսոփայության խոշորագույն ներկայացուցիչ Գեորգ Հեգելի (1770-1831 թթ.) արված դիտարկումով՝ «Պատմությունը սկսվում է միայն այն ժամանակ, երբ աշխարհում սկսում է գործել բանականը» [Гегель, 1974, 57]: Մեր ձևակերպմամբ՝ պատմությունը գիտակցական, բանական մարդու Երկիր մոլորակի վրա համահավաք կենսագործունեության պրոցեսն է և նրա ստեղծած (արարած) արդյունքը: Այս առնչությամբ գերմանացի ականավոր պատմաբան Լեոպոլդ ֆ. Ռանկեն (1795-1886 թթ.) պատմության իմաստը իրավացիորեն տեսնում էր պատմական

գործողությունների վերջնարդյունքով [Ոսկանյան, 2017, 96]: Հավանաբար վերջնարդյունք ասելով պիտի հասկանալ ոչ միայն ձեռք բերված նվաճումները, հաղթանակները կամ ձախողումները, այլև դրանցից սովորելիք փորձն ու դասերը, նաև ոչ նյութական հոգևոր արժեքները և այլն: Դարձյալ գերմանական դասական փիլիսոփայության ներկայացուցիչ Ֆ. Նիցշեն (1844-1900 թթ.), իր նիհիլիստական (ժխտողական) մտածելակերպին բնորոշ, պատմության վերաբերյալ փիլիսոփայում էր՝ «Ամենևին հնարավոր չէ կանխատեսել այն ամենը, ինչը մի օր դեռ պատմություն կդառնա: Անցյալը, թերևս, հիմնականում դեռևս մնում է չբացահայտված»[Նիցշե, 2018, 179]:

Դիտարկումներ պատմական հիշողության, ճշմարտության և հոգևոր-բարոյական հոլովույթների մասին: Պատմափիլիսոփայական հայտնի կատեգորիաների և մտածողության ձևերի միջոցով է ճանաչվում աշխարհը, հասկացվում ժամանակային ու տարածական գոտու մեջ խմորվող և ձևավորվող պատմությունը: Անշուշտ, մի կողմից հավերժական ու անդառնալի անցյալի, իսկ մյուս կողմից ներկայի ու ապագայի միջև ներքին պատմական ու նաև հոգևոր կապ կա, քանզի դրանք ժամանակային առումով իրար իրավահաջորդ են, դրանց գլխավոր դերակատարները մարդիկ են, որոնք իրենց հոլովույթով շարունակ հագեցնում են պատմությունը: Այդ ճանապարհին կարևոր դեր ունի պատմական հիշողությունը: Արդարև, անցյալի հետ երկխոսությունը սերտորեն կապված է հիշողության կամ դրա մոռացության հետ: Ընդ որում՝ դրանց մի մասը, կապված կյանքի պահանջմունքների հետ հիշատակվում է, իսկ մյուսը՝ ըստ էության՝ մոռացվում: Բայց հնարավոր է, որ կյանքի, իրողությունների կամ հանգամանքների թելադրանքով՝ մոռացության մատնված անցյալի որոշ դրվագներ կրկին վերհիշվեն ու վերարթնանան: Սակայն անառարկելի է, որ առանց պատմական հիշողության՝ չկա պատմություն: Պատմական հիշողությամբ է, որ մարդիկ, առաջին հերթին պատմագետը գրավոր և ոչ գրավոր համապատասխան միջոց-գործիքներով (գործիքակազմով) վերականգնում են անցյալը: Եվ պատմական անցյալի այդ վերականգնված հիշողության միջոցով է, որ ապահովվում է հոգևոր կապը արդեն ասված երեք հասկացությունների՝ անցյալի, ներկայի ու ապագայի միջև:

Պատմական հիշողությունը վերաիմաստավորվում է նրա համար, որպեսզի դրա փորձով հնարավոր լինի նորօրյա խնդիրներ լուծել: Անցյալն ու ներկան միմյանցից ամբողջությամբ առանձնացված միավորներ չեն: Դրանք գտնվում են հոգևոր, իմացական կապի մեջ՝ անցյալի հիշողությամբ կարող ենք պատկերել ու հասկանալ ներկան և, հակառակը, ներկայի միջոցով կարելի է շատ կողմերով հասկանալ ու պատկերացում կազմել տվյալ ազգի, պետության անցյալի մասին, դրանց որակումներ ու գնահատականներ տալ:

Պատմական հիշողությունը ենթադրում է նաև պատմական ճշմարտություն: Բայց միշտ չէ, որ պատմական հիշողությունը տանում է ճշմարտության բացահայտմանը: Այստեղ խնդիրն այն է, որ պատմական հիշողությունը կարող է աղավաղված լինել կապված դրա բուն ակունքների, նույնպես և այն մատուցող պատմաբանի արհեստավարժության, նրա կողմից հասարակական միջավայրի ընկալման ու սեփական էմոցիոնալ ընկալումների հետ: Ճշմարիտ պատմության վերհանման ճանապարհին շատ է կարևորվում հետազոտողի թեմատիկ առումով նպատակադրված հարցադրումները, թե ինքն ի՞նչ է ցանկանում գտնել, իսկ դրան հասնելու համար պետք է ջանա ճիշտ հարցադրումներն անել: Նման դեպքում, որպես կանոն, փնտրվածի պատասխանը ճշմարիտ կլինի, նույնիսկ ավելին: «Հետամուտ լինել ճշմարտությանը,- գրում է Ֆ.

Նիցշեն, նշանակում է հետամուտ լինել երջանկությանը» [Նիցշե, 2018, 428]: Իսկ պատմական ճշմարտությունը, ինչպես որ մյուս գիտություններինը լինում է մեկ: Այլ կերպ՝ երկու ճշմարտություն չի կարող լինել: Ի՞նչ է պատմական ճշմարտությունը հարցերին կարելի է տալ հետևյալ ամփոփ պատասխանը, որ երբ որոշակի իմաստ ու բովանդակություն ունեցող պատմական այս կամ այն երևույթը, իրադարձությունը կամ դրվագը հնարավոր է լինում հիմնավորել պատմության տեսական, մեթոդական ու մեթոդաբանության գործիքակազմով զինված հետազոտողի կողմից՝ առկա գրավոր, փաստավավերագիր, իրեղեն, բանավոր և այլ սկզբնաղբյուրների ու նյութերի կիրառման, համադրման, պարզաբանման, բացահայտման ու հրապարակման միջոցով: Այս կապակցությամբ գերմանացի ականավոր փիլիսոփա Օ. Շպենգլերը (1880-1936 թթ.) պատմաբանների ուշադրությունը հրավիրում էր հետևյալ հանգամանքի վրա, որ հետազոտողները «ոչ թե պետք է բավարարվեն տվյալ դարաշրջանի քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրոնական, նույնիսկ գեղարվեստական կողմերի նկարագրությամբ (иллюстрации), այլ նրանք մոռանում են վճռականը (решающее)՝ որ տեսանելի պատմությունը հանդիսանում է միայն հոգևոր տարերքի ձև ու արտահայտություն (դրսևորում)» [Шпенглер, 1998, 40]: Նա այնուհետև հոռետեսորեն հարց է տալիս՝ ո՞ւմ է պետք պատմությունը և պատասխանում. «Թեև հարցը թվում է պարադոքսալ, բայց պատասխանում եմ՝ անշուշտ, բոլորին, քանզի յուրաքանչյուրը հանդիսանում է պատմության տարրն ու անդամը: Առանց սուբյեկտի հնարավոր չէ և օբյեկտը» [Шпенглер, 1998, 43]: Ի դեպ, նշենք, որ Օ. Շպենգլերի գաղափարների հանդեպ որոշակի հետաքրքրություն են հանդես բերել հայ գրողներ Ե. Չարենցը, Կ. Զարյանը և Հ. Օշականը [Ոսկանյան, 2017, 184-186]:

Հարկ է կրկին արձանագրել, որ, հիրավի, մարդն ու մարդկությունը, իրոք, ապրում են հիշողությամբ, իսկ լայն ու խորքային առումով այն ամբարված է պատմության մեջ և մարդկանց ուղեղներում: Առանց պատմական հիշողության ժողովուրդները, ազգերն ու ազգությունները դատապարտված են այլասերման ու դեգրադացիայի: Յուրաքանչյուր քաղաքացի, առավել ևս մտավորականի համարում ունեցող անձնավորություն պարտավոր է իմանալ առաջին հերթին իր ժողովրդի, հայրենիքի ու պետության հերոսական էջերը, ստեղծարար աշխատանքը և դրա հետ միասին անխուսափելիորեն նաև թույլ տված սխալներն ու ձախողումները: Պատմությունը կատարում է դաստիարակիչ գործառույթ, ժողովրդի մեջ ձևավորում է քաղաքացիական բարձր որակներ, հայրենասիրություն, հումանիզմ, նպաստում ճանաչելու կյանքի լավ ու վատ կողմերը և այլն: Գերմանացի փիլիսոփա Յոհան Հերդերը (1744-1803 թթ.) պատմությունը անվանել է դաստիարակիչ, Իմանուիլ Կանտը (1724-1804 թթ) ՝ ազատության հասկացության զարգացում, իսկ Գ. Հեգելը՝ համաշխարհային ոգու ինքնաբացահայտում [Шпенглер, 1998, 57]: Հավանաբար դրա համար է, որ հաճախ ասվում է՝ մարդը պետք է փոքր-ինչ լինի պատմաբան, որպեսզի դառնա գիտակից և բարեխիղճ քաղաքացի: Այս առիթով է նաև, որ ասվում է հետևյալ հանրահայտ խոսույթը, որ կարելի է լինել գրագետ մարդ՝ չիմանալով (չտիրապետելով) բազմաթիվ գիտությունների: Բայց չի կարելի լինել զարգացած մարդ՝ առանց պատմության իմացության:

Այդպիսով՝ պատմության և նրա գիտակարգ լինելու միակ չափանիշը ճշմարտությունն է: Ճշմարտությունը մտածողության գերագույն նպատակն է, փիլիսոփայական հարցադրմամբ՝ պետք է որոնել այն, քանզի որքան էլ քաղցր կամ դառը լինի ճշմարտությունը, այն գերադասելի է այն ամենից, ինչը ճշմարիտ չէ, կեղծ է ու սուտ: Բերված մտքերից հետևում է, որ ինչպես պատմության, նույնպես և պատմագիտության մեջ ճշմարտությունից ավելի բարձր արժեք չկա, ուստիև շիտակ, անաչառ և օբյեկտիվ պատմաբանը կոչված է առաջնորդվել գիտական ու բարոյական այդ սկզբունքով: «Պատմություն գրելը,- խորհում է մեր ժամանակների ռուս պատմաբան Անդրեյ Զուբովը,- պահանջում է ոչ թե միայն փաստերի արձանագրում, այլև դրանց բարոյական իմաստավորում» [История России, 2009, 5]: Պատմության բարոյական իմաստավորում նաև նշանակում է զանց չառնել պատմական ճշմարտությունը, փաստերը չհարմարեցնել, առավել ևս կեղծել դրանք՝ ծառայեցնելով վերևից պարտադրված կոնյունկտուրային (քաղաքական նպատակահարմարության) պահանջմունքներին, քաղաքական, կուսակցական, հատվածական շահերին, անձնական (սուբյեկտիվ) նախասիրություններին և այլն: Պետք է տեսնել, որ պատմական ամեն մի արժեք ներկայացնող երևույթի կամ իրադարձության բացահայտմանը հետևող գիտական հետազոտությունը և եզրահանգումը ուղղված է ոչ միայն ներկային, այլ ավելի շուտ ու շատ՝ ապագային:

«Պատմություն» հասկացության բարոյական արժեհամակարգն հասկանալու համար ինքնատիպ պարզաբանում է տվել գերմանացի խոշոր պատմաբան ու մեթոդաբան Յոհան Դրոյզենը (1808-1884 թթ.), որ «Պատմություն է համարվում մեր կողմից ընկալվող մարդկային բարոյական աշխարհի (ընդգծ մերն է- Ա. Հ.) շարժումը [Дройзен, 2004, 248]: Ըստ նրա՝ «Մարդը մարդ է դառնում բարոյական ընդհանրության պայմաններում» [Дройзен, 2004, 201]: Մեկ այլ տեղ էլ նա նշում է՝ «Պատմությունը բարոյական աշխարհի տիեզերք է՝ շարժման, ձևավորման և աճի մեջ» [Дройзен, 2004, 204]: Բնությունը և պատմությունը, եթե չասենք ներդաշնակ են, ապա գոնե իրար չեն բացառում: Դրոյզենի փիլիսոփայական մեկնությամբ՝ ինչպես անհատ մարդիկ, նույնպես և ժողովուրդները հավերժ չեն ապրում, ամեն ինչ փոփոխվում է: Եթե նա ունի պատանեկություն, ապա գալիս է հասունություն, ծերություն և անխուսափելի մահ: Կյանքը պատմության մեջ ոչ միայն աստիճանական (поступательный) առաջընթաց է, այլ նաև իր որոշ փուլերում ընդհատվող, երբեմն անգամ հետընթաց: Եվ նա, իբրև օրինակ, բերում է Հռոմեական կայսրության անկման վերջին շրջանը [Дройзен, 2004, 28]: Ըստ Դրոյզենի, այնուամենայնիվ, պատմությունը ընթանում է բարոյական հունով դեպի ավելի կատարելություն: Դրան օգնող գործոններն են մարդկանց բնազդական ինքնագիտակցության բարոյական ուժը, արարելու ձգտումը, մարդկանց կողմից Աստծո գոյի ճանաչումը, այսինքն՝ հավատքը [Дройзен, 2004, 273]:

Հնարավոր չէ ժխտել կամ հակառակն ապացուցել, որ պատմագիտական հետազոտությամբ հնարավոր չէ պարզել պատմության վերջնանպատակը կամ վախճանը, ինչպես որ մինչ օրս հնարավոր չի եղել պարզել ու ապացուցել Աստծո, մարդու և պատմության ծագումը: Կրկին դառնալով փիլիսոփա Ն. Բերդյաևի «Պատմության իմաստը» աշխատությանը՝ պատմությունը դիտարկված է իմաստային դաշտում, պատմության նկարագրությունը նրա պատկերմամբ՝ ոչ թե իրադարձությունների մեխանիկական գումար է, այլ ամենից առաջ որոշակի իմաստ բովանդակող, ոգեկան հոլովույթ: «Թվում է,- գրում է Ն. Բերդյաևը,- պատմությունը թվեր ու փաստեր են մեզանից առաջ, մեզ հետ կապ չունեցող իրադարձություններ: Պատմությունը մերկ

փաստական նյութ չէ, այլ մեծագույն ոգեղեն ռեալություն» [https://mediamax.am]: Պատմությունը գիտություն է ոգեկան իրողությունների մասին, որը կոչված է իմաստավորելու անցյալը և իր կուտակած փորձով կողմնորոշելու անհատներին, պետություններին, հասարակությանը դեպի բարեկեցիկ ներկան ու ապագան: Սակայն պատմության տված օգուտից բացի՝ այն դառնում է մարդու համար մի տեսակ հոգևոր բեռ, որից նա չի կարողանում ազատվել, հաճախ էլ զրկում է նրան ինքնուրույն մտածելուց: Մարդ կոչվածը չի կարող մոռանալ անցյալը՝ իր դրական ու բացասական կողմերով, հերոսական ու ողբերգական դրվագներով այնպես, ինչպես որ նա չի կարող մոռանալ իր ապրած անցյալը, իր հարազատներին, նրանց կորուստը և այլն:

Պատմության հեռանկարի շարունակականության կամ ընդհատման հարցում գոյություն ունեն տարբեր կարծիքներ ու տեսակետներ: Այս առնչությամբ՝ Կարլ Յասպերսը հարց է տալիս, թե ընդհանրապես ինչու գոյություն ունի պատմությունը և պատասխանում է, որ ինչպես մարդն իր բնույթով, նույնպես և պատմությունը անավարտ են, այսինքն՝ շարունակական են: Պատմությունն ինքն իրեն չի կարող ավարտվել: Նա կարող է ավարտվել միայն ներքին անկայունությունից (несостоятельности) կամ տիեզերական աղետից [Ясперс, 1991, 242-243]: Այդ ամենով հանդերձ՝ Կ. Յարսպերսը համաշխարհային պատմության պրոցեսը դիտում էր որպես մեկ միասնական գործընթաց, որն, ի վերջո, ունենալով սկիզբ, կունենա նաև ավարտ[Ясперс, 1991, 21]: Իսկ Ֆ. Նիցշեի դարձյալ հոռետեսական պատկերմամբ՝ «Կգա ժամանակ, երբ մարդկության առջև կկանգնի կապիկի իդեալը՝ իբրև նպատակ» [Նիցշե, 2018, 435]:

Պատմության ընկալումը ժամանակի ու տարածության մեջ: «Պատմություն» հասկացության հիմնահարցի հետ սերտորեն կապվում են ժամանակի ու տարածության տեսական ու գործնական ընկալումները: Հայտնի է, որ պատմության փիլիսոփայության հիմնահարցերից է ժամանակի ու տարածության մեջ ժամանակի հասկացության ընկալումը, որովհետև պատմության շարժման ու գործընթացի ոգեղեն հոլովույթը ժամանակի մեջ է: Պատմությունն ունի ժամանակի և տարածության իր սահմանները: Մարդկության պատմությունը կազմում է Երկրի պատմության աննշան մասը: Պատմության մեջ գոյություն ունի նաև լավ և վատ գործերի ժամանակի հասկացություն: Լավ ասելով հարաբերականորեն հասկացվում է այն, որ մարդը, հասարակությունը, պետությունն իր ժամանակի մեջ ապրել է բովանդակալից, բարեկեցիկ, զարգացում, հոգևոր մշակութային վերելքի պայմաններում, որպիսիք կարելի է հանդիպել այս կամ այն պատմագիր հեղինակի երկերում, փաստավավերագիր նյութերում, հուշագրություններում և այլն: Օրինակ՝ Հին Հունաստանի պատմությունից հիշատակելի է Աթենքը Պերիկլեսի կառավարման ժամանակաշրջանում: Իսկ մեր ժամանակների հետ կապված՝ որքան էլ որ զարմանաք ու պարադոքս հնչի, օրինակ, խորհրդային հասարակության տարիքավոր մարդիկ հիշում են խորհրդային պետության 1960-1970-ական թվականները, նույնիսկ կիսակատակ այն որակելով «կոմունիզմի ժամանակաշրջան, որն իբրև անցավ իրենց կողքով», ինչի գնահատականը հեգնական է, շատ պարզունակ ու միակողմանի:

Դրան հակադիր՝ պատմության ընթացքում մարդկանց գիտակցության մեջ ու մտածելակերպում առկա է նաև վատ ժամանակի հասկացություն, երբ նրանում բովանդակվում է մարդկանց, էթնոսների, պետությունների և այլն, ռազմաքաղաքական բնույթի, սոցիալ-տնտեսական, նյութական ապրելակերպի առումներով ծանր, դժվարին ու նույնիսկ աղետալի տարիներ, ինչպիսիք, օրինակ, ասենք՝ արևմտահայության կացությունը Օսմանյան կայսրությունում հատկապես XIX դ. վերջերին ու XXդ. սկզբներին: Կամ օրինակ, խորհրդային ժողովուրդների համար հայրենական կոչված պատերազմի տարիները և կամ նույնիսկ հայ ժողովրդի համար վերանկախացած Հայաստանի 1990-ական թվականների անցումային դժվարին տարիները և այլն:

Ժամանակի գնահատման հարցում գոյություն ունի նաև, այսպես կոչված, անտեղի կորսված ժամանակի հացկացություն: Սակայն փիլիսոփայական ընկալմամբ՝ մարդկանց, հանրության լավ չապրած տարիները չի կարելի համարել (որակել) որպես անտեղի կորսված ժամանակ: Մարդկանց, ժողովուրդների ու պետությունների կրած այդ դժվարին, ծանր ու նույնիսկ դժոխային համարվող ժամանակը ևս պատմափիլիսոփայորեն պիտի դիտել որպես նախահիմք, պատմության փորձ, փորձառություն ու դաս, դրանով պայմանավորված մարդկային ինքնագիտակցության աճ, շարժում և ձգտում՝ հաղթահարելու ծառացած այդ դժվարությունները, թեկուզև մարդկային ու նյութական ծանր զրկանքներով ու կորուստներով՝ հաղթահարելու դրանք երկրի և ժողովրդի հետագա լավ օրերի, բարեկեցության հասնելու համար: Ռուս ականավոր պատմաբան և մտածող Վասիլի Կլյուչևսկու (1841-1911 թթ.) դիտարկմամբ՝ պատմությունը ընկալվում է երկու իմաստով՝ 1/ իբրև ժամանակի մեջ ընթացող (շարժվող) գարծընթաց և 2/ իբրև այդ գործընթացի ճանաչում, իմացություն (познание)[Ключевский, 1987, 34]:

«Պատմություն» հասկացության հարցադրման հետ է կապվում նաև մարդկային հասարակության պատմության ժամանակագրական առումով ֆորմացիոն պարբերացումը՝ ժամանակային ու տարածական շրջափուլերով՝ սկսած նախնադարից մինչև մեր նորագույն ժամանակները (դարաշրջանը): Եվրոպական պատմափիլիսոփայության ներկայացուցիչներ՝ Լ. Ռանկեն, Կ. Յասպերսը, Ա. Թոյնբին, Օ. Շպենգլերը, Հ. Ռիկկերտը և ուրիշներ պատմության ընթացքի վերաբերյալ իբրև ընդհանրական երևույթ, ժամանակի ու տարածության մեջ պատմության շրջափուլային բաժանումների (պարբերացման) հիմքում հիմնականում դրել են մշակույթն ու քաղաքակրթությունները՝ իրենց բնորոշ դրսևորումներով ու յուրահատկություններով: Օրինակ՝ փիլիսոփա, մաթեմատիկոս Օ. Շպենգլերը իր «Եվրոպայի մայրամուտը» կամ «ավարտը» աղմուկ հանած գրքում, պատմության պարբերացման հիմքում դնելով քաղաքակրթությունների շրջափուլերը, դրանք բաժանելով 8 մեծ մշակութային շրջափուլերի և վերջինը համարելով ներկայիս Արևմտաեվրոպականը, սակայն նրա պատկերմամբ՝ վերջինը ևս գնում է դեպի ավարտական փուլ» [Шпенглер, 1998, 14, 34]: Ըստ XX դ. փիլիսոփա, սոցիոլոգ Առնոլդ Թոյնբիի (1889-1975 թթ.) պատմությունը քաղաքակրթությունների զարգացման ամբողջություն է [Смоленский, 2007, 148]: Ընդ որում՝ փլիսոփա տեսաբանները առանձնացնում են համաշխարհային քաղաքակրթությունների (Մեծ մշակույթի) 8-ից մինչև 21 տեսակ [Смоленский, 2007, 53]: Ավելին, Ա. Թոյնբին համաշխարհային մշակույների պատմության քարտեզի վրա ներկայացրել, ավելի մանր, առավելագույնը՝ 37 քաղաքակրթություններ [Тойнби, 1991, 6-7, 559, 724-725]: Հատկանշական է, որ Շումերա-աքքադական քաղաքակրթության մեջ նա ներառել է նաև «Ուրարտականը» [Тойнби, 1991, 724]:

Observations on the Concept of "History" (19th–20th centuries) (Questions of Theory of History)

Դիտարկումներ «պատմություն» հասկացության մասին XIX-XX դդ.

(պատմության տեսության հարցեր)

Ինչպես գիտությանը հավակնող ամեն մի բնագավառ, նույն կերպ նաև պատմությունը ևս ունի իր փիլիսոփայությունը: Դա պատմության փիլիսոփայությունն է, որին Գ. Հեգելը դասախոսությունների տեսքով նվիրել է հատուկ աշխատություն [Гегель, 1932, 3-480]: «Ինչպես ամեն մի առարկա,- գրում է ռուս առաջին մարքսիստ Գ. Պլեխանովը,- պատմության փիլիսոփայություն էլ ունեցել է իր սեփական պատմությունը» [Պլեխանով, 1928, 10]: Եվ առհասարակ ամեն գիտություն, գիտակարգ ու գիտական առարկա (դիսցիպլին) ունի իր պատմության փիլիսոփայությունը:

Կնշանակի՝ պատմության փիլիսոփայության գիտական ընկալումների համաձայն՝ պատմության հիմնական կերտողը մարդն է: Մարդն ու պատմությունը անբաժանելի են: Մարդը ոչ միայն բնության, այլև պատմության անդամ է: Չկա մարդ, չկա և պատմություն: Պատմության իմաստն ու էությունը կարելի է հասկանալ փիլիսոփայական հիմնական օրենքներից մեկի՝ հեգելյան եռմիասնական դիալեկտիկական օրենքի միջոցով, ինչը գործում է ինչպես բնության, նույնպես և պատմության մեջ: Սակայն նախընթաց դարաշրջաններում հասարակական միտքը ըստ պատմական էպոխաների (շրջափուլերի) տվել է պատմության մեկնության ամենատարբեր բացատրություններ՝ սկսած հոգեպաշտությունից (անիմիզմ) վերջացրած արդի գիտական մեկնություններն ու կոնցեպցիաները: Այդ ճանապարհին նախ հայտնի է պատմության երևույթների և գործընթացների աստվածաբանական մեկնությունն ու բացատրությունը: Համաձայն այդ պատմափիլիսոփայական տեսության՝ պատմության մեջ ինչ տեղի է ունենում, ի վերուստ պլանավորված է: Դրա իմաստը կայանում (հանգում) էր նրանում, որ պատմական անցքերը, իրադարձությունները, երևույթները, աղետները և այլն կախված են աստվածային, արարչական նախախնամությունից, գերբնական ուժերի կամքից, բացարձակ ոգուց և այլն:

Մարդկության պատմությունը հարկ է դիտել իբրև մեկ միասնական ամբողջություն և նրա յուրաքանչյուր աստիճան հնարավոր է ճիշտ հասկանալ միայն այդ ամբողջի լույսի ներքո: Համաշխարհային պատմության յուրաքանչյուր դարաշրջան բարդ ու անվերջ բազմազան է: «Էպոխաների կամ ֆորմացիաների փոփոխություններ անհրաժեշտաբար ծագում են այն ժամանակ,- գրում է գերմանացի դասական փիլիսոփա Յոհան Ֆիխտեն (1762- 1814 թթ.),- երբ նախորդը առաջին հերթին ներքուստ իրեն սպառում է, դառնում առաջընթացի խոչընդոտ և դրանով պայմանավորում անցումը նորին, ավելի բարձրին ու կատարյալին և այդպես անվերջ» [Фихт, 1906, 12-13]:

Եվ վերջապես պատմության իմացության մյուս ուսանելի կարևորագույն կողմը դրա կիրառական, արդիական ու գործնական նպատակներին ծառայեցնելն է: Հարկ է հասկանալ, որ պատմությունը պատմության համար չէ, այլ անցյալի մասին գիտելիքներ հավաքելով ու յուրացնելով ծառայեցնել արդի խնդիրների լուծմանը: Այդ նշանակում է, որ պատմությունը նաև ներկա է: Այդ իմաստով անցյալն ու ներկան փոխադարձ կապի մեջ են, դրանք փոխպայմանավորում ու փոխհարստացնում են միմյանց: Ճիշտ է նկատել «Աննալների դպրոցի» հիմնադիրներից, ֆրանսիացի պատմագետ Մարկ Բլոկը (1886-1944 թթ.), որ «Ներկան

չհասկանալը անցյալի չիմացության անխուսափելի հետևանք է: Բայց և նույնքան ապարդյուն է անցյալը հասկանալու ամեն ջանք, եթե ներկայի մասին ոչինչ չգիտես» [Блок 1986, 27, Բլոկ 2018, 89]: Դժվար է չնկատել, որ ներկան իր բոլոր ձեռքբերումներով, կառույցներով, նյութական, հոգևոր ու բարոյական արժեհամակարգով հենվել ու բարձրացել է անցյալի միջոցով, անցյալի վրա: Ինչ վերաբերում է, այն հարցին, թե պատմությունը գիտություն է, թե արվեստ՝ Մ. Բլոկը պատասխանում է, որ այն «գիտություն է մարդկանց և ժամանակի մասին» [Блок 1986, 17-18]: Մարկ Բլոկը պատմության ժամանակը նմանեցնում (համեմատում) է մի տեսակ պլազմայի, որում լողում են ֆենոմենները, մարդիկ [Блок, 1986, 19]: Այստեղից, ինքնին հասկանալի է, որ պատմությունը հնարավոր չէ պատկերացնել առանց մարդկանց ու ժամանակի: Առանց դրանց պատմությունը կվերածվի անկյանք ամայի անապատի: Նրա աշխատության ծանոթագրություններից մեկում արված դիտողություններից մեկում կարդում ենք՝ «Մենք պատմությունից երեք բարիք ենք սպասում՝ ամենից առաջ անսովոր իրադարձություններից հաճույք ստանալ, հետո՝ հատկապես կյանքի համար օգտակար խրատներ և վերջապես՝ պատմություն այն մասին, թե ինչպես է անցյալից առաջացել ներկան» [Блок, 1986, 120]:

Այսպիսով՝ եվրոպական, մասամբ նաև ռուսական պատմափիլիսոփայական միտքը, ժամանակի ու տարածության առումով, ամենատարբեր մտքեր ու տեսակետներ են արտահայտել պատմության իմաստի, պարբերացման, նրա խաղացած դերի ու նշանակության մասին: Պատմությունն, անշուշտ, կազմում է մարդկանց, հասարակության, նրանց հիշողության, նյութական, հոգևոր, մշակութային արժեքների պահպանման անբաժան ու անօտարելի մասը և այլն:

Երկու խոսք պատմության մարքսիստների դիտարկումների մասին: Ինչ վերաբերում է Կ. Մարքսի և մարքսիզմի հոտևորդների պատմության հարցում ունեցած դիրքորոշումներին, ապա պիտի ասել, որ նրանց ուսմունքում ևս բարձր տեղ է տրված պատմությանը: Ժամանակին մարքսիզմի ուսմունքի հիմնադիրներ Կարլ Մարքսը (1818-1883 թթ.) և Ֆրիդրիխ Էնգելսը (1820-1895 թթ.) պատմագիտության առնչությամբ գրում էին, որ «Մենք գիտենք միմիայն եզակի մի գիտություն՝ պատմության գիտությունը» [Маркс и Энгельс, 1972, 34]: Իհարկե, պատմությունը նրանք էլ էին բաժանում երկու՝ բնության և մարդկության պատմությունների, որոնք իրար հետ անխզելիորեն կապված են և դրանք պիտի քննել միասնության մեջ [Մարքս և Էնգելս, 1972, 7]: Սակայն Կ. Մարքսի և մարքսիստների համար առաջնայինը մարդկային հասարակության, նրա սոցիալ-դասակարգային բովանդակության պատմությունն է, որի ուսումնասիրման գերնպատակը դասակարգային ու հեղափոխական պայքարի ճանապարհով աշխարհի վերափոխելն էր և իբրև անդասակարգ կոմունիստական հասարակարգի հաստատումը: Ըստ մարքսիզմի՝ պատմության գլխավոր կերտողը ժողովուրդն է: «Մարդիկ,- գրում է Կ. Մարքսը,- իրենք են կերտում իրենց պատմությունը, բայց ոչ թե այնպես, ինչպես իրենք են ցանկանում, այլ որոնք անմիջապես տրված են նրան և անցյալից են փոխանցվել» [Մարքս և Էնգելս, 1972, 541]: Կ. Մարքսի գաղափարակից ու գործընկեր Ֆ. Էնգելսը, պարզաբանելով Մարքսի հիմնադրույթը, «իբրև մարդկային պատմության զարգացման հայտնագործած օրենք» [Մարքս և Էնգելս, 1978, 7] կրկին պնդում էր, որ մարդկության պատմության ընթացքում հասարակական քաղաքական արմատական փոփոխությունների և հեղաշրջումների պատճառը պետք է փնտրել՝ «համապատասխան դարաշրջանի էկոնոմիկայի (ընդգծված է՝ Ա. Հ.) մեջ» [Մարքս և Էնգելս, 1978, 107]: Ամերիկացի փիլիսոփա Ֆր. Ֆուկույաման

(ծնվ. 1952 թ.) համաձայն չլինելով պատմությունը զուտ նյութական, տնտեսական ասպեկտով մեկնաբանության մարքսյան տեսությանը (ուսմունքին)՝ գտնում էր, որ մարդը պարզապես չի համարվում տնտեսական կենդանի, (ընդգծ. մերն է՝ Ա. Հ., Վ.Հ.), որ կենսաբանական խնդիրներ լուծելուց զատ նա ձգտում է, որ իրեն ճանաչեն որպես մարդ՝ իր արժանիքներով, ունակություններով, խելքով, ուժով, այլ կարողություններով և որ պատմության արշալույսից ի վեր՝ կռիվ է մղել իր ազատության, նաև տիրելու, իշխելու և այլնի համար [Фукуяма, 2005, 14-15]: Կ. Մարքսին շատ ավելի կտրուկ է քննադատել գերմանացի փիլիսոփա, պատմաբան Մակս Վեբերը (1864-1920 թթ.) ուտոպիական համարելով նրա կապիտալիզմից սոցիալիզմին անցմանը վերաբերող վերլուծությունը, աշխարհը հեղափոխականորեն վերախելու ուղին, իսկ մարդկանց կեցության և գիտակցության փոխհարաբերության հարցում նա սնանկ համարեց մարքսյան առանցքային սկզբունքներից մեկի՝ արտադրա-տնտեսական հարաբերություններով հասարակական գիտակցությունը որոշելու գաղափարը [Вебер, 1990, 38-39]:

Այդուհանդերձ, ինչպես գիտենք, XX դարասկզբին Կ. Մարքսի ուսմունքի իբրև գործնական շարունակող Վլ. Լենինը (1870-1924 թթ.) մարդկային, նյութական և հոգևոր մեծ կորուստների գնով, հանձին հատկապես 1917 թ. հոկտեմբերյան կոչված պետական հեղաշրջման՝ Ռուսական կայսրության փլատակների վրա փորձ արեց երկիրը դուրս բերել սոցիալիզմի, իսկ հեռանկարում կոմունիզմի «ուղեծիր», որը, սակայն, մի 70 տարի անց այդ էքսպերիմենտը՝ գաղափարական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և այլ առումներով, գործնականում կոոլապսի ենթարկվեց ու կրախի մատնվեց:

Այսպիսով՝ պատմության իմաստի, էության ու բովանդակության վերաբերյալ փորձելով ներկայացնել եվրոպական և մասամբ նաև ռուս հեղինակների դիտարկումները՝ կուզենայինք այն ավարտել ռուս տարագիր ու մեծ մտածող Ն. Բերդյանի ոչ լավատեսական հետևյալ պատասխանով՝ «Պատմությունը դրական իմաստ ունի միայն այն դեպքում, երբ ավարտվում է» [Բերդյան, 2019, 231]: Իրոք, եթե հարցը դիտարկում ենք փիլիսոփայորեն, ապա հանրահայտ է այն պատասխանը, որ «այն, ինչ ունի սկիզբ, կունենա նաև վերջ»: Եվ այս միտքը հազարամյակներ շարունակ շրջանառվել է՝ անկախ նրանից, թե մարդն ու հասարակությունը ինչպես է այն ընդունել ու ընդունում: Բայց մարդն ու մարդկությունը շարունակում է ապրել ու արարել իր իրական ու առօրեական կյանքով՝ չնայելով ու չգիտակցելով սպասվելիք տխուր գալիքը:

Ի՞նչ է պատմությունը Հայաստանի և հայերի համար: Ինչպես արդեն քանիցս ասվեց, մենք ուսումնասիրում ենք անցյալը, որպեսզի լավ հասկանանաք ներկան և ճիշտ կողմնորոշվենք ապագայում: Պատմությունը մեր անցյալն է, առանց որի քիչ թե շատ իմացության՝ աներևակայելի է պատկերացնել ապագան: Սովորաբար մարդիկ, ազգերը իրենց պատմական ակունքներին ու անցյալին իրազեկ լինելու ներքին պահանջմունք ունեն: Մեծն Գ. Նժդեհը պակասավոր էր համարում այն մարդուն, որը չգիտի իր ժողովրդի պատմությունը: «Չկա ավելի մեծ հանցանք, ուրացում,- խորհրդածում էր նա,- քան իր սեփական պատմությանը անծանոթ լինելը: Սեփական պատմությունն է մեր իմաստուն խորհրդականը, մեր ոգու դայակը» [Նժդեհ, 2002, 495]: Մենք

համաշխարհային ազգերի մեջ ինքնատիպ մշակույթ ու քաղաքակրթական արժեքներ ստեղծած ու արարող ազգ-հանրույթ ենք, և դրանով էլ ընդգծվում է Հայ ցեղի ինքնությունը:

Պատմության իմացությունը առավել կարևորվում է արդի գլոբալացվող աշխարհի մարտահրավերներին ճիշտ դիմագրավելու, հայրենի պետականության ու ժողովրդի պաշտպանությունն ու անվտանգությունը ապահովելու, ամրակայելու, զարգանալու, քաղաքակրթական արժեքներ ստեղծելու և առաջադեմ ժողովրդավար երկրներից հետ չմնալու իմաստով: Քաղաքական իմաստով այս կամ այն երկրի ու ժողովրդի պատմություն ասելով, կարելի է հասկանալ որպես նրա ազատության, անկախության և ազգային ինքնիշխան պետականության համար պայքարի պատմություն և այլն:

Պատմություն ասելով յուրաքանչյուր երկիր ու ժողովուրդ ամենից առաջ հասկանում է իր հայրենիքի ու ժողովրդի պատմությունը, որտեղ հիմնականում ընթացել է նրա նախնիների պատմական անցյալը, դարերի խորքից արարվել ու փոխանցվել են նյութական և հոգևոր արժեքներ, որի կուտակած հարուստ փորձով դաստիարակվում են ներկա ու ապագա սերունդները, դրանով իսկ ապահովելով պատմության անընդհատության հոլովույթը և այլն: Մեզ հեգեհարազատ հայոց պատմության առնչությամբ պետք է արձանագրել նրա աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը լինելու փաստը, որ նրա ավելի քան 3-4 հազարամյակների պատմությունը հիմնականում ընթացել է իր բուն հայրենիքում՝ միջազգայնորեն ընդունված Հայկական լեռնաշխարհում, իսկ վարչաքաղաքական բաժանմամբ ավելի քան 300 քառ. կմ կազմող Մեծ Հայք-Հայաստանում:

Հայ հանրության ազգային գիտակցության մեջ արմատավորված է այն համոզմունքը, որ վաղնջական ժամանակներից մեր այդ հայրենի հողում է կազմավորվել հայ ժողովուրդը, այնտեղ են կերտվել բարձրագույն արժեքներ ներկայացնող Հայոց հին և միջնադարյան 5-6 համահայկական պետականությունները (թագավորությունները), Հայոց հողի վրա են արարվել համաշխարհային ու համազգային նշանակություն և ճանաչողություն ունեցող ազգային-պետական, հոգևոր մշակութային քաղաքակրթական արժեքները՝ պատմությունը, հավատը, գիրն ու գրչությունը, գիտությունը, արվեստը, ճարտարապետությունը և այլն, որոնք, անշուշտ, կազմում են համաշխարհային պատմամշակութային արժեքների անօտարելի օրգանական մասը:

«Պատմություն» հասկացության, իմաստի ու բովանդակության հարցադրման հետ է առնչվում նաև մեր ժամանակներում հայ հասարակական ու պետաքաղաքական շրջանակներում հաճախ շրջանառվող հայրենիք-Հայաստան-պետություն կոնցեպտի (հարացույցի) շուրջ բանավեճը, ինչը, կարծում ենք, չի կարելի հակադրել իրար: Ներկա իրական Հայաստան ասելով՝ չի նշանակում, թե պետք է մոռացության մատնել պատմական Հայաստանը: Հայոց հազարամյակների պատմությունը եղել ու պետք է մնա մեր դպրոցականի և ուսանողի դասագիրքը: Երբ ասում ենք Հայրենիք՝ դրա տակ չպետք է հասկանալ միայն ներկայիս իրական Հայաստանը, այլ խոսքով՝ ներկայիս Հայաստանի Հանրապետություն: Նման մտայնությունը ոչ միայն հակագիտական ու հակապատմական է, մերժելի է հոգևոր-բարոյաքաղաքական առումով: Մոռացության մատնել մեր պատմական Մեծ Հայրենիքը՝ կնշանակի ապրել առանց իդեալի, իսկ եթե «Չկա՞յ ազգային իդեալ-չկա՛յ ձգտում, չկա՛յ ստեղծագործութիւն, չկա՛յ հաղթանակ, ապագա չկա՛յ» [Նժդեհ, 2002, 447]: Մինչդեռ մեր այս ողջ շարադրանքի գիտագաղափարական իմաստներից մեկն այն է, որ Հայոց պատմությունից չի կարելի դուրս թողնել, իբրև հոգևոր-բարոյական արժեք, սերունդներին

փոխանցվող հազարամյակների մեր Մեծ Հայրենիքը՝ Մեծ Հայքն՝ իր հարուստ պատմությամբ: Արդարև, դա միայն հայոց պատմական անցյալի հիշողություն չէ, դա նաև խորհրդանշում ու միաժամանակ կողմնորոշում է մեր և հետագա սերունդների ներկան ու ապագան: Մինչդեռ, ինչպես ասվել է, հանրահայտ խոսք կա՝ չկա պատմական հիշողություն, չկա նաև պատմություն: Ստացվում է, որ մեր արևելյան հարևանը՝ Ադրբեջանը, ըստ էության, պատմական հայրենիք ու պետություն չունենալով, տակավին ձևավորված ազգ չլինելով հայրենիք է ստեղծում՝ անգամ մեր հայրենի հողերի (երկրամասերի) հանդեպ ոտնձգություններ:

Այս համատեքստում, օրինակ, ասենք, ինչպես կարելի է պատմաքաղաքական քննարկումների օրակարգից, թեկուզ և գիտատեսական մակարդակով, դուրս թողնել ու մոռացության մատնել տասնամյակներ շարունակ միջազգային ատյաններում դիվանագիտական քննության նյութ դարձած և Արևմտյան Հայաստանին վերաբերող Հայկական հարցը, կամ թե դրա ուղղակի փաստավավերական լուծումը հանդիսացող 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրում կնքված միջազգային պայմանագիրը ու դրա տրամաբանական շարունակությունը հանդիսացող ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի՝ 1920 թ. նոյեմբերի 22-ին ստորագրած Իրավավար (Arbitrage) վճիռը Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստանի վերաբերյալ [Ադոնց, 1996, 171, Լազեան, 1991, 214, Հովհաննիսյան, 2016, 386, Հակոբյան, 2020, 139-143 և ուրիշներ]: Դա, թերևս, նոր դարաշրջանում մեր պատմական ամենամեծ ձեռքբերումն էր, որը, սակայն, աշխարհաքաղաքական մրցակցային պայքարի հորձանուտում և սեփական ուժերի անբավարարության հետևանքով կյանքի չկոչվեց: Պատմության այս համայնապատկերում հարց է ծագում, թե ինչպես կարելի է Սևրը մոռանալ: Պատմական առումով այն երբեք հնարավոր չէ մոռանալ, ինչը մեր վերջին մի քանի սերունդի կենդանի հիշողությունն է, որը պիտի պատասխանը լիներ ցեղասպանված ու հայրենազրկված ժողովրդին երբևէ իր հայրենի հողում հաստատվելու և ապրելու հրամայականին:

Մյուս կողմից, արդի դարաշրջանում ուժերի հարաբերակցությունը հաշվի առնելով, պետք է հստակ լինի նաև այն կոնցեպտը, որ մեր պատմական հայրենիքի գաղափարը, մեր մշակութային ժառանգությունը, արժեքները պիտի պահպանվեն, դասավանդվեն ու փոխանցվեն սերնդեսերունդ: Բայց աշխարհաքաղաքական, մեր տարածաշրջանային իրողությունների հաշվառումով մեր ներուժը գլխավորապես պետք է ուղղվի ՀՀ-ը կենսունակ, դինամիկ զարգացող պետություն ստեղծելուն: Պետք է նկատի ունենալ, որ պատմական որևէ պատեհ (նպաստավոր) փուլում մենք պետք է փորձենք մեր ազգային իղձերի ու իրավունքների վերականգնման համար պայքարել: Եվ դրա գլխավոր գործիքը լինելու է Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Հանրապետության կորստով մենք կշրջենք մեր պատմության վերջին էջը: Եվ այս իմաստով, պատմության հստակ գիտակցումը, սթափ արժևորումը և նրա բազմահարուստ փորձի հաշվառումը կարևոր է մեզ ու ապագա սերունդների համար:

Եզրակացություն: Այսպիսով՝ պատմությունը մեզ պետք է անցյալը չմոռանալու, այն հասկանալով ներկան իմաստավորելու և ապագայի հանդեպ ճիշտ կողմնորոշվելու հետազոտական դաշտ է: «Ի՞նչ է պատմությունը» հասկացության հարցին տրվելիք ընդհանրական

պատասխանը այն է, որ թեև այն իր անվան ու կոչման գործառույթով անցյալի մասին է, սակայն համոզված կարելի է պնդել, որ նրանում կուտակված ու մեզ փոխանցված իրադարձային [Ոսկանյան, 2017, 363], երևութային, նյութական, հոգևոր և այլ արժեքները, նաև ուսանելի հարուստ փորձն ու դասերը համայն մարդկությանն, այդ թվում և Հայաստանին ու հայ ժողովրդին դեպի ճշմարտություն, ազատություն, ժողովրդավարություն, առաջընթաց ու զարգացում ուղղորդող ներկա ու ապագա է: Պատմությունը նաև հիշողություն է, որում թաքնված է կյանքի արմատները: Առանց պատմական հիշողության՝ չկա պատմություն: Պատմությունը կոչված է նպաստելու մարդկանց ազգային գիտակցության ու ինքնագիտակցության ձևավորմանը: Այն նաև մարդկանց հոգևոր կյանքի ճանաչման միջոց է, իսկ նրա իմաստն ու բովանդակությունը չափվում է պատմական գործընթացների վերջնարդյունքով: Այդ համատեքստում, եվրոպական պատմափիլիսոփայական միտքը պատմության իմաստի և հեռանկարի հարցում տվել է ինչպես դրական, այնպես էլ վատատեսական, նույնիսկ նրա ավարտական փուլի վտանգի մասին դատողություններ ու գնահատականներ: Եվ վերջապես, հարկ է հատուկ ընդգծել, որ պատմությունը Հայաստանի ու հայերի համար, իր բազմահարուստ անցյալով, ունի առանձնահատուկ իմաստ ու նշանակություն:

Գրականության ցանկ

Alishan G., Hayapatum (patmich'k' yev patmut'iwnk' Hayots'), Venetik, i Vans S. Ghazaru, 1901, (649 ej):
Adonts' N., Haykakan harts', h. A, Yer., «Hayagitak» hrat., 1996, 244 ej: 3.
Berdyayev N., Patmut'yan imasty, germ. t'argm. D. Mosinyani, Yer., «VMV-print», 2019, 268 ej:
Blok M., Patmut'yan pashtpanakan, kam patmabani arhesty, t'argm. SH. Margaryan, Yer., «Antares» 2018, 389 ej:
Lazean G., Hayastan yev Hay Daty, Yer., «Adana» hrat., 1991, 435 ej:
Leo, Haykakan harts'i vaveragrery, Yer., YePH hrat., 2014, 272 ej:
Hakobyan A., Miats'yal yev Ankakh Hayastani gaghap'ary Hayots' patmut'yan holovuyt'um, Yer., «Lusakn», 2020, 212 ej:
Hovhannisyan R., Hayastani hanrapetut'yun, h. 4, Yer., 2016, 546 ej:
Mark's yev Engels, Yntir yerker, h. 1, Yer., «Hayastan» hrat., 1972, 776 ej:
Mark's yev Engels, Yntir yerker, h. 3, Yer., «Hayastan» hrat., 1978, 727 ej:
Nzhdeh G., Yerker, h. 1, Yer., «Luysas» SPY tp., 2002, 504 ej:
Nits'she Fridrikh, Yerker, hing hatorov, h. 2, germ. t'argm. Hakob Movses, Yer., «Antares», 2018, (612 ej), nuyny, h. 3, Yer., 2018, 680 ej:
Voskanyan A., Ch'arents'i zhamanaky (patmut'yuny vorpes ink'nahaght'aharum), Yer., «P'rint'info», 2017, 373 ej:
Plekhanov G., Patmut'yan materialistakan ymbrrnumy, T'iflis, HSKHH pethrat, 1928, 60 ej:
Sargsyan A., P'ilisop'ayut'yan dasynt'ats', 2-rd hrat, Yer., «Tntesaget» hrat., 2010, 524 ej:
Blok M., Apologiya istorii ili remeslo istorika, izd. 2-ye, perevod Lisenko Ye. M., M., izd. «Nauka», 1986, 256 ēĭ:
Veber M., Izbrannyye proizvedeniya, per. YU. N. Davydova, M., «Progress», 1990, 808 s.

Gegel' G. , Entsiklopediya filosofskikh nauk, t. I, M., izd. «Mysl'», 1974, 452 s.
Gegel' G., Sochineniya, t. IX, Leningrad, «Gosizdat», 1932. 319 s.
Gegel' G., Sochineniya, (filosofiya istorii), t. VIII, perevod A. M. Vodena, M.-L., «Gosizdat», 1935. 470 s.
Gegel' G., Lektsii po filosofii istorii, izd. 2-ye, perevod A. M. Vodena, SPb, izd. «Nauka», 2005, 480 s.
Droyzen I., Istorika. Lektsii ob entsiklopedii i metodologii istorii, SPb, izd. «Vl. Dal'», 2004, 408 s.
Istoriya Rossii. XX vek (1894-1939), otv. red., A. Zubov, M., 2009, izd. AST, 1023 s.
Klyuchevskiy V., Kurs Russkoy istorii, t. I, M., 1987, izd. «Mysl'», 430 s.
Kollingvud R. Dzh., Ideya istorii. Avtobiografiya, per. YU. A. Aseyeva, M., izd. «Nauka», 1980, 486 s.
Marks i Engel's, Sochineniya, 2-ye izd., M., t. 20, M., «Gosizdat», 1961, t. 20.
Rikkert G., Granitsy yestestvenno-nauchnogo obrazovaniya ponyatiy, perevod A. Vodena, SPb, izd. Ye. Kuskovoy, 1904, 615 s.
Rikkert G., Filosofiya istorii, per. s nemetskogo S. Gessena, SPb, izd. D. Ye. Zhukovskogo, 1908, 154 s.
Rikkert G., Filosofiya istorii, per. s nemetskogo S. Gessena, SPb, izd. D. Ye. Zhukovskogo, 1908, 154 s.
Smolenskiy N., Teoriya i metodologiya istorii, M., izd. «Akademiya», 2007, 272 s.:
Sokolov A., Istoriya istoricheskoy nauki, 2-ye izd., M., izd. «Yurayt», 2018, 270 s.
Toynbi A., Postizheniye istorii (Sbornik), M., izd. «Progress», 1991, 736 s.
Shpengler O., Zakat Yevropy, Rostov n/Donu, izd. «Feniks», 1998, 640 s.
Fikhte I., Naznacheniye cheloveka, SPb, tip. «Montvida»,1906, 133 s.
Fukuyama F., Konets istorii i posledniy chelovek, M., izd. «Yermak», 2005, 590 s.
Yaspers K., Smysl i naznacheniya istorii, M., Politizdat, 1991, 527 s.
https://mediamax.am (viewed: 01.05.24).